ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-21/34 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **26 օգոստոսի 2021թ.**

2021թ-ի օգոստոսի 25-26-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ դիզելային վառելիքի ձեռքբերման ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝ Հիմնադրամի գլխավոր ճարտարագետի տեղակալ,

Ֆ. Բարսեղյան՝ Հիմնադրամի Հիմնադրամի տեխնիկական բյուրոյի ղեկավար,

Ա. Բաղրամյան՝ Հիմնադրամի ավագ հաշվապահ

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ք. Ազիբեկյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ք. Ազիբեկյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1.ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-21/34 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Դիզելային վառելիք ձմեռային (բաքով)	3753000
2	Դիզելային վառելիք ամառային (կտրոնով)	690000

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացում և բացումը, ինչպես մաև հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցե	Էլ. փոստ
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8	maxoil.llc@mail.ru

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
3. Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

Չափաբաժնի		Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները		
N	Անվանում	անվանում	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի նշում՝ «X»	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Դիզելային վառելիք ձմեռային (բաքով)	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	1	X	3127500	625500	3753000
2	Դիզելային վառելիք ամառային (կտրոնով)	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	1	X	575000	115000	690000

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. Ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում, համակարգի կողմից տրամադրված պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ֆ. Բարսեղյան _____

Ա. Բաղրամյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ք. Ազիբեկյան _____